

## ԶԱՆՍԱԶԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ՄՈՒՐՃԻ ՅԱԶՈՐԳ ԼԱՄԱՐԸ պարունակելու է վերջին մասերը Պուչկինի «Պալլադա»-ի, Ադելհանի «Սկեսուր»-ի, Ա. Զիլինկարեանի լողածի, Ա. Արասխանեանցի «Արեսորը ըստ Տալարոյի», շարունակութիւնները Գար. Խաթախեանի «Հարկերը Տաճկաստանում», Միք. Յովհաննիսեանի «սոցիալական էտիլոցիա», գր. Կ. Փաշաեանի «Ող և կլիմա» լողածները. նոր նիւթերից՝ Յովհ. Տէր-Միրաքեանի «Ֆաղաքակրթական-պատմական աստիճանները լուսաբանութեան օժանդակող սոցիալ-գրութիւններ», Գր. Վանցեանի «Հայերէնը մշակելու նիւթեր», Լ. Մանուէլեանցի «Բաքալ Մարդասիրական ընկերութեան դրաղարանի հաշիւը», Արիօմէղի «Ֆաղաքալին ինքնավարութիւնը» և այլն և այլն:

ՄՈՒՐՃԻ № 2-ը, միացած № 3- հետ, լոյս կը տեսնի մարտին, որից չե-  
տոյ իւրաքանչիւր համար պիտի լոյս տեսնի իւր ամսին:

ՆԻԷՐՆԵՐ ՄՈՒՐՃԻ ՊԱՐՏՔԵՐԸ ԼԱՆԳՅՆԵԼՈՒ ԼԱՄԱՐ: Պր. Ա. Խօջայեա-  
նից (Պրոխլազնեա, Հիւս. Կովկ.) 5 ուրբլի:

ՆՈՐ ՀՐԱՄԱՆ ՖԻՆԼԱՆԳԻԱՅԻ ԼԱՄԱՐ: Թագաւոր-Կայսրը, փետր. 5-ին  
տւած մանիֆէստով հաստատեց նոր կանոններ այն օրէնքները կաղ-  
մելու, քննելու և հրատարակելու մասին, որոնք Ֆինլանդիային վե-  
րաբերելով հանդերձ՝ նաև ընդհանուր կայսրութեանն են վերաբերում:

ՊՈՒՇԿԻՆԻ ԾՆՆԳԻՆԱՆ 100-ԱՄԵԱԿԸ, որ լրանալու է մայիսի 26-ին,  
տօնելու է Ռուսիայում ամենախառաւոր ձեռքի Գորա համար ամիս-  
ներէջ ի վեր ընդարձակ ծրագիրներ են կազմուած. տօնեն համառու-  
սական կերպարանք տալու համար, Պուչկինը ուսաց առաջին մեծ  
բանաստեղծն է և վերջնական ձևակերպողը ուսաց լեզուի:

ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԱԼԷԻՍԱՆԳՐԱՊՈՂՈՒՄ: Փետրուարի 7-ին Ալէքսանդրապոլ  
եկաւ Թիֆլիսից առաջին երկաթուղային գնացքը, որ ընդունակ  
հանդիսաւոր կերպով քաղաքային վարչութեան և խորհրդարանի  
կողմից և որին ներկա էին տեղի զինուորական ծայրերը և ժողովրդէ  
հոծ բազմութիւն:

«ԷՄԻՆԵԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ»: Որպէս չարտնի է, Մոսկուաի Լազարեան ձեմարանի հանդ. պրոֆէսոր Մկրտիչ Էմինը կրակել էր 10.000 ռուբլի որը դրած է Պետական բանքալի Մոսկուաի ձեմարանում և նորանով հիմնել կից Լազարեան ձեմարանին, «բրամագլուխ լանուն գաղտնի խորհրդական Մկրտչի Յովսէփեան Էմին», հաստատուած մարտ 7-ին 1893 թ. կրթական մինիստր կոմս Գեւեանովից: Համաձայն կանոնագրին՝ դրամագլխից գուցացած տոկոսները «պիտի գլխաւորապէս դրժագրելին ուշադրութեան արժանի ժողովածուներ, նիւթեր և հետազոտութիւններ հրատարակելու հալոց ազգագրութիւնից և ժողովրդական հալոց գրականութիւնից» (չօդ. 2).—«Որպէս ժողովածուները, նոյնպէս և առանձին աշխատութիւնները, որոնք տպւելու են դրամագլխի միջոցներով, պէտք է ունենան գիտական նշանակութիւն և վերաբերին հալոց ազգագրութեան (էթնոգրաֆիա) բառիս ամենաընդարձակ մտքով. հետեապէս և հաւատարիքներին, Հալաստանի հնութիւններին ու պատմութեան, որպէս նաև հալոց լեզուին, բանաւոր և գրաւոր գրականութեան, արւեստներին: Ժողովածուները պէտք է նւիրած լինեն Էմինի լիշարակին» (չօդ. 3).—«Գլխամագլխի միջոցներով տպւող աշխատութիւնները պէտք է նախապարիւ կերպով գրած լինեն հալերէն, բայց կարող են հրատարակել նաև ռուսերէն գրած աշխատութիւններ, որոնք ներկայացնում են առանձին շահեկանութիւն»: (Յօդ. 4):

Մենք թարգմանեցինք 10 չօդած պարունակող կանոնագրութիւնից կարևորագոյնները:

Մինչև արժամ Էմինի գրամագլխի միջոցներով, որպէս չարտնի է, լոյս են ընծաւել չորս հատոր նոյն իսկ Էմինի աշխատութիւններից, պրոֆ. Գր. Խալաթեանի հրատարակութեամբ: Իսկ արժամ դրամագլխի լանձնաժողովը (բաղկացած ձեմարանի վերաբեռչից ու լսարանների երկու պրոֆէսորներից) որոշել է Էմինի դրամագլխով, համաձայն կանոնագրութեան հրատարակել Ազգագրական ժողովածու, «Էմինի ազգագրական ժողովածու» անունով, լանձնելով խմբագրութիւնը իւր անդամներից պրոֆ. Գր. Խալաթեանցին:

Էմինի Ազգագրական ժողովածուն հրատարակելու է «առանձին հատորներով՝ ըստ կարելւոյն դարին մի անգամ, իսկ բարեւաջող պայմաններում՝ և աւելի լաճախ»:

Հատորներում տեղ են գործելու հում նիւթեր (երգեր—ցանկալի է ձալնագրած,—հէքիաթներ, առասպելներ, հանելուկներ, գաւառական բառեր և այլն), չօդածներ և կամ հետազոտութիւններ հալ ազգագրութեան մասին, (նոյն բովանդակութեամբ, նաև հին հալ գրչագիր կամ նոյանից քաղած լիշարակարաններ, ժողովրդական կիան-

քին վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւններ, աղլուսալիներ, պատկերներ, լուսանկարներ, քարտէզներ և այլն)։

Աշխատակիցներին տրուած է իրեն վարձատրութիւն՝ իրենց գրած քննրի հարած քնները 25—50 օրինակ, եթէ փոքրիկ են չօղւածները և 50—150 օրինակ արտարպած գրքերով, եթէ նոքա չորս տպագրական թերթից աւելի են։

**ՀԱՅԿԱՅԱՆ ՄԱՄՈՒԼ:**

Հանրագիտակ—լրագիր (չարաթաթերթ) գրական և գիտական. խմբագրապետ-տնօրէն Ղ. Բոլաթ: Կ. Պոլլիս: Բաժնեգին թիւրքիալի համար տարեկան 50 դահեկան, այլ երկիրներէ համար 15 Ք. (=6 ռ.): Այդ անուն թերթը, որ բնաւ ծանօթ չէ Կովկասեան հաւերիս, հրատարակուած է մօտ երկրորդ տարին (մինչև այս չունարի վերջը հրատարակած է 14 համար): Մեզ հասած այս տարաւ առաջին համարները կարելիութիւն են տալիս չաղրնելու, որ այդ թերթը իւր տեսակում միակն է մեր մամուլի մէջ և թողնուած է շատ նպաստաւոր տրայտրութիւն: Թերթի խորագիրը (լրագիր գրական և գիտական) բաւականաչափ ճիշդ գաղափար չէ տալիս իւր ոչ պակաս օգտակար բովանդակութեան մասին. նա բնաւ զրական չէ, այլ միայն գիտական է, և աւելի ճիշդ՝ գործնական-գիտական կամ արհեստագրանական, որին արդարև հաջ աղղը մեծ կարիք ունի: Ահա, օրինակի համար, մեր ամենալերջը սրացած համարի (№ 45) բովանդակութիւնը.

Խմբագրական.—Մատենախօսական.—Հ. Ս. Նրամեանի «Գործնական-Գիտութեանց Բառարանը».—Ղ. Բոլաթ՝ Ծաղկերանական պէտպիսութիւններ. Վարդը. Մշակութիւնը և Նսկութեան պատրաստութիւնը.—Ղ. Բոլաթ՝ Շեքամարտեմութիւնը Պատրէօրեան գրութիւնով (=մեթոդով). Մակարուծալին փոխանցիկ հիւանդութիւններ. Փոտախո (Ֆլաշբրի):—Ներ. Գ. Նիկողոսեան՝ Բուսարանական՝ Բուսերու վերաբարտրում:—Ղ. Բոլաթ՝ Ներկարարութիւնը. Բուրդ—Տանդիկիւնը—Խոհանոցի բաժին:—Նամակներ և հարցումներ առ խմբագրութիւն:—Տ. Պողաճեան՝ Արքիմէդէսի լծակը.—Թղթակցութիւն, Ազդ և այլն:

Առաջին համարներէ ընթերցումից երեսում է որ պ. Բոլաթ, որը թերթի խմբագիրը լինելով նաև նորա գլխաւոր աշխատակիցն է, լաւ նախապարտարութիւն ունի իւր սրանձնած գործի համար: Եւ ոչ միայն գործնական գիտութիւն է ծաւալուած այդ թերթի մէջ, այլ և աշխատակիցներէ ու թղթակիցներէ ձեռքով տրուած են թիւրքիալում և ալլուր եղած արհեստներէ մասին շատ օգտակար տեղեկութիւններ, ուսումնասիրութիւններ, Աւելցնենք որ թերթի լեզուն մաքուր հայերէն է, զիւրըմբանելի բաւց և ճիշդ գիրական:

Թերթի ամեն համարը 16 երկօրին մեծ էջերից է բաղկացած։  
 Զերմագլին լանձնարարում ենք նաև Ռուսա-Հայոց հասարակութեան ուշադրութեանը այս օգտակար թերթը, և գէթ արհեստագիտական և հայոց թեմական դպրոցների և այլ գիւղ ու քաղաքների գրադարան-ընթերցարանները անհրաժեշտորէն պէտք է բաժանորդ գրեն նորան։ Նոցա հետ կարող են միանալ նաև արհեստիները (այլ և պարտիզպանութեան, երկրագործութեան) նախանձախնդիր անհայրները։

**ՆԻՔՐՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ:**

Դանիէլ Գունանեանց (Պարսկաստանի Սալմաստ գաւառի Սաւրա գիւղացի, Ռոստոլում Գոնի վրաչ բնակող վաճառական) նւիրել է 10.000 ռուբլի Սալմաստի կենտրոնական գիւղադրոսական-արհեստագիտական հայոց ուսումնարանի համար (որի շինութիւնը գաղաբեցրած է մինչև Շահից թուլութիւն սրանալը)։ Վիշեալ գումարից 2.500 ռ. արդէն զրկած է Արտպատականի առաջնորդի Սալմաստի փոխանորդին։ մնացեալը պիտի հատուցւի երեք տարւաչ ընթացքում 2.500-ական ռուբլիով։

—Յովհաննէս Սարգսեան (Սալմաստ գաւառից) նւիրել է 1.000 ռուբլի նույն նպատակով։

**ԱՐՏՕՆԵԱԼ ՀՈՂԱՏԷՐԵՐԸ ԻՔՐԵՒ ԶԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ:**

Կողկ. Կառավարչապետի «Կաւակաղ»-ում տրած մի շրջաբերականից երևում է, որ Թիֆլիսի արքունի գանձարանի հաշիւներով Թիֆլիսի նահանգի «արտօնեալ դասակարգի» (=ազնւականներին) հողալէն հարկը կանոնաւոր չվճարելու պատճառով գուացել է 180.000 ռուբլի սպառելի, մինչդեռ տարեկան վճարելիքը ընդամենը 38.000 ռուբլի է։ Ուրեմն ապառիկները կազմում են ամբողջ հինգ տարւաչ հարկի գումարը։ Չպէտք է կարծել թէ այլ ապառիկները վճարելու անկարութիւնից է։ Կառավարչապետի շրջաբերականում ասւած է թէ «այդ կարգի հարկերի ալդքան խոշոր ապառիկների բարգւելու համար առանձին լարդելի պատճառներ չկան»։

**ԲԼԷԿ-ՌՈՏԸ ԱՆԳՐԿՈՎԿԱՍՈՒՄ:** Մուրճի մէջ անցեալ տարւաչ համարներից մէկում մենք հաղորդել էինք, որ Փրանսիացի գիտնական դը-Լակրուա՝ իւր և պրոֆ. Պրիլէժ'ի անունից հերքում էր բլէկ-ոտորի գոյութիւնը Անդրկովկասում։ (Բլէկ-ոտոր խաղողի որդնի զարհուրելի հիւանդութիւն է, ֆիլոքսերայից աւելի վրանդաւոր)։ Ալժմ. սակալն, պրոֆ. Պրիլլէն հաղորդել է երկրագործական միջնարարութեան, որ նա հաստատում է ակադեմիկոս Մ. Ս. Վորոնցովի կարծիքը և գործում, որ հետազոտելու համար իրեն զրկածը Անդրկովկասից բլէկ-ոտորի սունկ է։

**ՄՇԱԿԸ** շրապեց օգուտ քաղել Մուրճի անցեալ անդամ մեր գրածից ալ՛

բանի մասին, թէ ինչպէս նա, Մշակ՛ը, մի քանի տարիներէից ի վեր սկսել է Մուրճ՛ի աչա ու աչն աշխատակիցներին գովել, մի-մի հոգու ամեն տարի! Տեսնում էք, գոչում է նա, դուք ինքնեք էք խոստովանում որ մենք (իման Մշակ) գովում ենք լաւը ուր որ գտնուած ենք: Իբր թէ անաչառութեան առաքինութիւն! Մենք, սակաւն չենք թողնիլ որ Մշակ՛ը մի ամսից աւելի վաշելէ աչխարդախութեան պտուղը, որ նա մոցրել է մեր գրածի մէջ: Ոչ, հազար անգամ ոչ. մեզնից շատ հեռու է աչ միտքը թէ դուք կարող էք երբ և իցէ անաչառ լինել. կամենաք էլ ուղղել—ձեր աւանդութիւնները պիտի դան աչք արգելելու: Մենք կը վերականգնենք մեր ասածը, որպէս զի պողի դառնութիւնը աւելի լաւ զգաք: «Մշակ՛ը, ասում էինք մենք, բեղարած իւր սխտրեմարիկական բացասութիւններով Մուրճ՛ի զէմ և սեանելով որ իւր բունած աչք զիւրքովը ինքը միաչն կորուստներ ունի հասարակաց կարծիքի մէջ, մի քանի տարիներէից ի վեր զիմել է մի պոլիտիկայի, որի ստոր խորամանկութիւնը նա կարծել է թէ գաղտնիք կը մնաչ ու չի բացւիլ: Գաղտնիքը աչն է, որ աչք «քաջ» թերթը սկսել է եր-եր քաշել, բաց մի աչնպիսի ձևով, որ չլինի թէ նկատեն թէ ինչպէս է նա իւր թրածները ես լիզում»: (Տես Մուրճ 1898, № 12, էջ 1801—2):

Եւ Մշակ՛ը աչ տողերում գտնում է ինչ որ կոմպլիմէնտներ իւր՝ Մշակի հասցէին! Մենք աչք տողերով պիտի խոստովանած լինենք նորա՝ Մշակ՛ի անաչառութիւնը...

Մշակը աւելի հեռու էլ է գնում. նա սպառնում է մեզ, որ մեր աշխատակիցներին խորամանկաբար «գովելով» դեռ հերթից առաջ մեզ կը հասնի, ու, խօսելով իւր վաղուցաչ մեծամտութեան նորագոչն տերմինոլոգիաչով՝ մեզ ևս «կը նկատի». միաչն թէ դորա համար մենք պէտք է դադարենք (մենք) լինելուց: Խորամանկի լեզու է աչք. Մուրճի տանամակը բոլորելուց չետու, երբ, առանց արհեստական ռէկլամներով զրգած լինելու, հաչ հասարակութիւնը ցուց տւեց իւր զգացմունքները զէպի Մուրճը, Մշակը՝ տեսնելով Մուրճի առաջը կտրելու բոլոր ջանքերը օղը ցնդած և ծաղրի մայրնւած՝ նոր-նոր խոստանում է մեզ (նկատել, որ ասել է թէ շարունակել թրածը ես լիզել!)

ՄՇԱԿ՛Ը ՄԻ «ԸՆԹԵՐՅՈՂԻ» ԱՌԱՋ. Մենք սորացել ենք մի զրութիւն, որից տպագրում ենք հետեալ կտորը.

«Մշակի անցեալ տարաչ 228-ի համարում (դեկտեմբերին) տպագրւած է մի չօղւած «Աղամ Միցկեւիչ» վերնագրով «Ա» ստորագրութեամբ Յօղւածից աչնպէս է երևում, որ իբր թէ մի ինքնուրոչն գրւածք է, մինչդեռ դա քաղւածօրէն բառացի

Թարգմանութիւն է «Նոյնն Վրեմնա»ի լաւելածում (№ 8181, դեկտ. 5-ից 1898 թ.) որպազրւած «Ադամ Միցկեիչ» («Адамъ Мицкевичъ») վերնադրով չօղւածից. միայն պ. Ա. չօղւածի սկզբում և վերջում աւելցրել է իրանից մի երկու խօսքը՝  
«8-ն փեորւ. 99. Բաքու Ընթերցող»

#### ՏԱՃԿԱՀԱՅՅԵՐ

Ձինորական տուրքը մի տարի ևս (սրանով երրորդ տարին) չե-  
որածգւած է գաւառաքնակ հայերի համար:

#### ՈՐԲԱՆՈՑՆԵՐ ՏԱՃԿԱՀԱՅՅԵՐԻ ՀԱՄԱՐ

Բաքւից հաղորդում են Նով. Աբաղրենիի՝ ինչ, որ ալզ քաղաքի  
հայերը 30.000 ոււր. զրկեցին «Ներպարական օգնութիւն» ժողովա-  
ծուր խմբագիր պ. Չանչիւիւն, որով 6 նոր որբանոցներ կը հիմնւին  
Տաճկաստանում որբ հայերի համար:

ԿՐՐՆԱՓՈՒՍՈՒԹԻՒՆՆԸ Վ.ԱՆՈՒՄ. Մուրճ'ի անցեալ համարներից մէկում  
հաղորդեցինք Վանում կատարւած կրօնափոխութիւնների մասին, ի  
վնաս լուսաւորչականութեան և չօղուող կաթողիկ եկեղեցու: Բայց  
ալժմ ալզ երևութը սորացել է մեծ կերպարանք. կաթողիկութիւն  
ընդունում են հալ լուսաւորչականներ ամբողջ համայնքներով: Ահա  
ալզ մասին Կ. Պոլսի թերթերում որպած տեղեկութիւնները: Վանի  
Կլոր Գարի մէջ տակաւին լուսաւորչական մնացած մի քանի տները  
համակերպեցան կրօնափոխ լինելու, բացառութեամբ 8. Մեսրոպ քա-  
հանալի Արարուց եկեղեցու շրջանակի մէջ գործող Ալիճեանց թաղի  
հայերը՝ 110 տնից բաղկացած, կաթողիկութիւն ընդունեցին իրենց  
թաղապետ ճոնեանի սուղնորդութեամբ: Քաղաքի շրջակայ Գուրու-  
պաշ հալաքնակ գիւղը, մօտ 100 տնից բաղկացած, խմբովին կաթո-  
լիկ եղաւ, բացի իրենց նորընծայ քահանայից: Նույնպէս Աւերակ  
անուն գիւղի 230 ի չափ հալ տները իրենց քահանայով: Աղթամարի  
թեմերից մի ամբողջ գիւղախումբ հայեր ևս կաթողիկութիւն ընդու-  
նելու վրայ են. ալզ գիւղերից Կէմը ներկայ չունւարին արդէն օրի-  
նակ տեղ կաթողիկութեան անցնելով, ի բաց առած 4 տուն, որոնք  
հաւատարիմ մնացին լուսաւորչական եկեղեցուն:

ՂՈՒԻԷ—ՖՐԱՆՍ. ՀԱՆՐԱՊԵՏ. ՆԱԽԱՂԱՀ. Փեորւ. 6-ին (=18) քրան-  
սիական կոնդրէսը (=սենարի և պարզամաւորների ժողովի խառը  
ժողովը) Ֆելիքս Ֆորի մահան պարծառով ընտրեց Ֆրանսիական  
Հանրապետութեան նախագահ՝ Լուբէ'ին 483 ձայնով, ընդդէմ Մե-  
լի'ին, որը սորացաւ 279 ձայն:

Էմիլ Լուբէ'ն սենարի նախագահն էր 1896-ից դէս, վերընոր-  
ւելով ամեն տարի:

Նախագահ Ֆորի մահից չեորզ պարզամաւորների միջև որւում  
էին ամենից շատ Լուբէի, Մելի'նի և Գիւպիւլի'ի անունները, որոնք

ունէին ամենից մեծ շանսեր ընդդրեւելու: Արմատրականները և սոցիալիստները որամտադրած էին չօգուտ Լուբէի, որը չափաւոր հանրապետականների թեկնածուն էր: Մեկինի թեկնածութիւնը զրեց հանրապետական չառաջդիմականների խումբը: Գիւպիւլին հրամարեց Լուբէի դէմ դնել իւր թեկնածութիւնը: Մեկինը նախ եր կանգնեց, իմանալով այլ և այլ խմբերի Լուբէին նպատաւոր վճիռները, բայց չեղող նորից ընդունեց հանրապետական չառաջդիմականների առաջարկը: Խօսուում էր նաև Գեշանէլի, Ֆրէյսինէի, Կոնստանի, Կամբոնի մասին:

Յիշեցնենք որ անցեալ ընդրութիւններին, 1895 թւականին, Ֆորի հետ քեզարկուողն էր Հանրի Բրիտոն'ը, որը այս անգամ այլ ևս չլիշեց:

Լուբէ'ն ծնւած է 1833 թ-ին դեկտ. 31 և այժմս ուրեմն 60 տարեկան է. նա խիստ կուսակցական գունաւոր մարդ չէ. 1887-ին Տիրարի մինիստրութեան մէջ հասարակաց աշխատանքների մինիստր էր, 1892-ին նա գլուխ էր մինիստրութեան, որը նույն տարւակ վերջը ընկաւ: Յալոյնի է որպէս արտակարգ բարեսիրտ և անկեղծ անձն, նորա թեկնածութիւնը պաշտպանեցին նաև նորա նախկին հակառակորդները՝ արմատականներն ու սոցիալիստները: Անկասկածելի հանրապետական է և նորա գործը կը լինի հանրապետական միաւորութիւն առաջ բերել, երկիրը խաղաղացնել Գրէյֆուսեան երկպառակութիւնից: Ահա նոր նախագահ Լուբէի առաջին թուղթը պարլամէնտին, որ կարդացուեց պարզամաւորների ժողովում և սենատում:

«Պ. պ. սենատորներ, պ. պ. պարզամաւորներ. Կոչելով ամենաբարձր պաշտօն երկրում, ես, ինձ վրայ դրած մեծ պարտաւորութիւնները կատարելու համար կարիք ունեմ սենատի և պարզամաւորների ժողովի աջակցութեանը: Ես ալը խնդրում եմ ձեզանց և հաւատացած եմ, որ դուրս մէջ պակասութիւն չեմ զգալ: Գուք կարող էք, պարոններ, հաւատացած լինել իմ հաստատ որոշման վրայ՝ նախքան քոյրը ու ժերս սահմանադրութեան պաշտպանութեանը: Գրան գրաւական կարող է լինել իմ անփոփոխ անձնաւորութիւնը հանրապետութեան: Եւ յանուութեան կանոնաւոր փոփոխումն, որ կատարուեց սիրեցեալ և ողբացեալ նախագահ Ֆելլիքս Ֆորի չանկարծակի մահից մի քանի ժամ չեղող, ամբողջ աշխարհի աչքում մի նոր ապացուց էր, որ Ֆրանսիան հաւատարիմ է հանրապետութեանը: Նույն աչն ժամանակ, երբ մի քանի խեղացնորներ փորձում էին խախտել երկրի վարածութիւնը դէպի իր հիմնարկութիւնները, — աղգալին ժողովը վերաբարի 18-ի օրը պարզ կերպով չալոնեց իր ցանկութիւնը՝ իրագործել մտքերի

հանգստացումը և վերականգնել ու ամուր հիմքերի վրալ դնել բոլոր հանրապետականների միութիւնը, որոնք ջերմ երկրպագու են ֆրանսիական լեզարիոսութեան սկզբունքներին և ազատ վարչութիւնները: Իմ մշտական հոգսը կը լինի օգնել պարլամենտին համբերութեան և համաձայնութեան ալդ անհրաժեշտ գործում: Յամանակաւոր դժարութիւնները, որոնց միջով Ֆրանսիան անցաւ սառնասրտութեամբ, արժանապատուութեամբ և հալրենատիրութեամբ, որ ցոյց տւեց պարլամենտը, բարձրացրին նրան աշխարհի աչքում: Ինչու չուստայ, որ հնարաւոր է համաձայնութիւն մեր ներքին գործերում: Միթէ ալդ համաձայնութիւնը գոտութիւն չունի երկրի մէջ: Միթէ կապածում է երկիրը այն բանում, թէ անհրաժեշտ է ջարդել Նոնայէս և հասարակական հիմնական օրդանները՝ պարզամաւորները ժողովը և սենատը, որոնք ազատ քննում են օրէնքները, դատաւորները, որոնք ալդ օրէնքները գործադրում են, կառավարութիւնը, որն ապահովում է նրանց կարարումը, և ազդալին զօրքը, որը պաշտպանում է հալրենիքի անկախութիւնը և ամբողջութիւնը, զօրքը, որին երկիրը սիրում է և որին նա հիմք ունի սիրելու, որովհետեւ նրա մէջ ամբողջ ազդը ի կարար է ածում անձնադատութեան և զխցիլլինայի միւնուոն պարտքը, որովհետեւ նա զիտէ, որ նորա մէջ կը գտնէ իր պատուի և օրէնքների հաւատարիմ պաշտպանին: Ֆրանսիան, վստահ իր վրալ, հնարաւորութիւն կուեննալ հանգիստ աշխարհլ այն խնդիրների լուծման վրալ, որոնք շօշախում են քաղաքացիների բարոյական և նիւթական բարօրութիւնը, և շարունակել իր խաղաղասէր և արդիւնաւէտ գործը թէ դադաւարները, զիտութիւնների և արեստների շրջանում, և թէ տնտեսական աշխարհալի շրջանում, նրա ամեն տեսակների մէջ—երկրագործութեան, աուտորի և արդիւնաբերութեան մէջ, Ղիննք աւելի արդարադատ մենք մեր մէջ և չթող տանք մոռանալ, որ մեր Ֆրանսիան միշտ դաւանում էր Նոնանման սէր դէպի աուաշարիմութիւնը, դէպի մարդկայնութիւնը: Նորա վաուաւոր անցեալը մի ժաւանգութիւն է, որը մենք պարտաւոր ենք պահպանել և բաղմապատելը: Հանրապետութիւնը ազատ հիմնարկութիւններ տւեց Ֆրանսիալին, նա ապահովեց Ֆրանսիալի համար անխախտելի խաղաղութեան անդնահատելի բարիքները, նա բժշկեց Նորա վէրքերը, վերակազմեց նորա զօրքը և նորա նաւարորմը, հիմնեց աւազին դաղթականական կալտրութիւն, կազմակերպեց ժողովրդական ամեն աստիճանի կրթութիւն, ձեռք բերեց դնահատելի դաշնակցութիւններ և բարեկամութիւն, դարմանալի կերպով բարձրացրեց արդիւնաբերութիւնը, ինքնօգնութիւնը և նախարեսութիւնը, որոնց նպատակն է ոչնչացնել կամ պակասեցնել անմեղ

դանջանքները: Ուրեմն զարգացնենք այդ արդիւնաբերութիւնը, որը պատիւ է բերում մեր երկրին: Եւ ինձ երջանիկ կը համարեմ, եթէ աշխատանքի օգնութեամբ, որը ոչ մի բանի առջև չի կանգ առնի, և շնորհիւ միաբանութեան, որի պահպանութեանը ես կը նւիրեմ իմ բոլոր ջանքերը, ինձ կաջողւի, — աչն իրաւունքների սահմաններում, որ դալիս է ինձ սահմանադրութիւնը և որոնց կը պաշտպանեմ ձեռքումս, — իրադործել մեր ընդհանուր ցանկութիւնները և հանրապետութեան ամրապնդումնս:

**ՖԻԱՆՍԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ:** Այդ երկու երկիրների միջև կապեց դաշն առե-  
տրական չարաբերութիւնների վերաբերեալ, մի իրողութիւն, որից սպասուում է երկու ազգերի չարաբերութիւնների բարւոքումը:

**ՖԻԱՆՍԻԱՅԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՒՅԻ:** 1898 թւին ալլազգիներից ֆրանսիա-  
կան հպատակութիւն են ընդունել 6.563 հոգի, որոնցից 4.239 տղա-  
մարդ և 2.342 կին. առաջինների մէջին 80 հոգի ուսանելու կամ ուս-  
սական լեհացիներ:

**ԴԻԷՅՖՈՒՍԻ ԳՈՐԾՐ:** Որպէս չարքնի է մեր ընթերցողներին, Քենէդը  
Բուքպէրը, հրաժարական տալով իւր պաշտօնից, պահանջեց որ  
Դրէֆուսի դործի վերաքննութեան մասին վճիռ տալ ոչ թէ վճռա-  
բեկ արեանի քրէական բաժինը, այլ վճռաբեկ արեանի բոլոր բա-  
ժանմունքների անդամները (թւով շուրջ 50 հոգի), առարկելով որ  
քրէական բաժնի մի-երկու անդամները իբր թէ բարեկամական չա-  
րաբերութիւնների մէջ են դրէֆուսեանների հետ: Կառավարութեան  
պահանջմամբ արեանի նախագահ Մագո քննեց և գտաւ որ դատա-  
ւորները անաչառ են եղել: Մինիստրութիւնը, կամենալով անաչա-  
ռութիւնը կատարաւագէտ ապահովել, ընդունեց Բուքպէրի պա-  
հանջը. բայց որովհետեւ ալդ բանը օրէնքի հակառակ է, ուստի  
առաջարկեց պարլամէնտին մի օրինագիծ, որի համաձայն այսուհետեւ  
վերաքննութեան վճիռ կալացնողը պիտի լինի ամբողջ վճռաբեկ  
արեանը իւր բոլոր բաժանմունքներով: Պալատան ալդ խնդիրը  
դուրս քննելու ոչ արտակարգ լանձնաժողովին, այլ չարակապէս դա-  
տարանական գործերի լանձնաժողովին, որը խնդիրը քննելուց լե-  
տու, 9 ձալնով ընդդէմ 2-ի մինիստրութեան նախագծին հակառակ  
կարծիք չարքնեց: Օրինագծի դէմ չարաբարեցին պարլամէնտում  
արմատականները՝ Բրիտոն, Բորթուա, Պուանկառէ, Պէլլոտան, Միլ-  
լուա, որպէս նաև ծարաւեղ ձախակողմեանները—սոցիալիստները.  
դէմ էին աչն պատճառով, որ կառավարութեան օրինագիծը պատա-  
հական դէպքի արդիւնք է, և դորանով իբր թէ խախտում են դա-  
տարանական հիմքերը: Կառավարութիւնը պաշտպանեց օրինագիծը,  
որ և ընդունեց 332 ձալնով, ընդդէմ 216-ի (30 լուսար հին տո-  
մարով): Սենատում դեռ չի վերջացել խնդրի քննութիւնը:

Մինչև Գրէչֆուսի զործր գաղափարական կարգով առաջ է ընթանում, միւս կողմից աւելի ու աւելի սկսում է սրազուլ հակա-գրէչֆուսականների ազիտացիայի բնաւորութիւնը, Ակսում է համոզմունք կաղմել որ Գրէչֆուսի զործից հակադրէչֆուսականները կամենում են օգրւել կղերական-արքայական լեզափոխութիւն առաջ բերելու համար: Այդ երեւոյց Ֆորի թաղման օրը (12 փետրւար հինդումար), երբ թաղումից վերադարձող գնդերից մինչ վերադարձին մտնում էր Նէլլի զօրանոցները, «հարեմասէրների լիգայի» անդամները անագին բազմութեամբ, դեռ ևս Ազգային հրապարակում պէցցէ գօրքը» բացականչելուց լեռու, աշխարհցին զօրքի հետ զօրանոցները մտնել, բայց այդ լաջողեց միայն լիգայի նախագահ Գէրուէր'ին և Հաբէր'ին: Սոքա փորձեցին զրոյել զեներալ Ռոմէ'ին և զօրքին լեզափոխութիւն անել, լայրնելով որ հանրապետութեան նախագահը պիտի ընտրուի ոչ թէ պարլամէնտի ձեռքով, այլ ազգային ընդհանուր ձայնադուութեամբ: Յաջորդ օրերը խուզարկութիւն կատարեց լիգայի անդամներից շարքերի մօտ և գտնեցան թղթեր, տպացուցանող որ լիգայի անդամները լարաբերութեան մէջ են արքայականների հետ: Գտնեցան Սրէյանեան դքսի պարկերներ ու մէզալներ մեծ թում, որոնք և գրաւեցին:

ԲՐԻՍՏՈՅ ԿՈՂՈՄԲՈՍԻ ՆՇԽԱՐՆԵՐԸ. Կուբայի անջարուելու պարճառով Իսպանիայից, Իսպանիայի կառավարութեան կարգադրութեամբ Կուբայի Հաւաննա քաղաքից փոխադրեցին Իսպանիա: Յունւարի 4-ին Կոլումբոսի դազազը հասաւ Կաղիքս, ուտրից փոխադրեց Սելիլիա քաղաքը ու հանդիսաւոր կերպով գրեց քաղաքի մալր վանքում, մինչև արձանի կառուցումը: Կոլումբոսի Նշխարների հանդիպումին ի միջի ալուց ներկայ եղաւ Ամերիկան զոնոզի միակ լեռնորդը՝ դուքս Վերագուան:

ԹԻՒՐԲԻԱ: ՄԱԿԵՂՈՆՆԱ: Ռուսաց «Պետական Համբաւաբերի» մէջ որպէս է. «Վերջին ժամանակներս ամեն տեսակ աղբիւրներից տեղեկութիւններ են ստացուում, թէ գարնանը Մակեդոնիալում պարտասուում է լեզափոխական շարժում, որի գլխաւոր ղեկավարները հանդիսանում են Բալկանեան թերակղզու մի քանի տեղերում կազմեած մակեդոնեան կոմիտէները: Այդ կոմիտէների հաւարարմարար գործակալները շրջում են Մակեդոնիայի քաղաքներն ու դիւղերը, ժողովուրդը զինւած ապտարմութեան կոչելով, այն լուսով թէ այդ եղանակով թիւրքաց կառավարութիւնը ստիպւած կը լինի այդ երկրին ինքնավար կառավարութիւն շնորհելու:

«Վւար է հաւատալ, թէ լիշեալ գործակալներին լաջողի խոսիւթիւն առաջացնել Մակեդոնիայի լաղաղ և աշխատասէր ժողո-

վերջի մէջ, անցեալի դասերը ցոյց տւին որ բոլոր նման կոմիտէ-ները, որոնք նպատակ են դնում, համակրութեան պատրուակով փանջ-ւող ժողովրդին, լեզափոխական քաղաքական պլաններ, նպատակին չհասնելով հանդերձ՝ միայն ծանր դժբախտութիւններ են բերել քրիստոնեազ ազգերի վրայ: Յանկալի բարեփոխութիւնը բալկանեան թերակղզու ազգերի ներքին կացութեան և վարչական կազմի մէջ կարելի է ձեռք բերել խաղաղ միջոցներով, և երբէք ներքին արիւն-նալիզ ցնցումներով, որոնք երկար ժամանակով ետ են պահում նո-ցա զարգացումը և քարղաւածումը:

«Այդպէս է ներկայումս բոլոր եւրոպական պետութիւնների տեսակէտը և մանաւանդ նոցա, որոնք, որպէս Ռուսիան, ձգտելով ընդհանուր խաղաղութիւնը ապահովելուն, անհրաժեշտ են համարում կարգի և հանգստութեան պահպանումը Բալկանեան պետութիւն-ների մէջ:

«Կազմակերպել հիմք չունալու, որ թիւրքաց կառավարու-թիւնը, որին իւր ժամանակին բարեկամական ցուցմունքներ են արել, ամեն ջանք կ'անի Մակեդոնիայում ասորիճանաւորապէս մոյցնելու ժողովրդի իսկական շահերին համապարասխանող վարչա-կան և դատարանական կարգեր:

«Եթէ, սակայն, չսպասելով այդ հետեանքներին և ուշք չդարձ-նելով նախազգացումներ ի վրայ, քաղաքական լուրջները, անձնա-կան շահերի բաղդախնդրութեամբ, չաջողեն լուծութիւն և լեզափո-խական շարժում առաջացնելու Մակեդոնիայում, ապա հաստատու կա-րելի է ասել որ այդ շարժումը ոչ մի դէպքում համակիր արձագանք չի գործիլ ոչ Ռուսիայում, ոչ էլ եւրոպական որ և այլ պետութեան մէջ»:

Իպէկում կալացաւ ալբանացիների (մահմեդականներ) աւագ-ների ժողով, ուր վճռուեց, որ Մակեդոնիայում լեզափոխական շար-ժում լինելու դէպքում, սուլթանի կարգադրութեան դրոյն 17—20000 մարդ, իսկ մեծ պատերազմի դէպքում 200.000 մարդ:

ԱՆԳՂԻՍ ԵՒ ՖՐԱՆՍԻԱ. Հաղիւ մի կերպ հարթուեց Փաշոպալի խնդիրը, որի մէջ Ֆրանսիան սորիպւած էր տեղի տալ Անգլիային Սուղա-նում, ահա ստեղծուում է մի նոր անախորժութիւն Ֆրանսիայի հա-մար: Արաբիայի արեւելեան մասում կալ Օմանի սուլթանութիւն Պարսից ծոցի կողմերում. (մալթաքաղաքն է Մասկաթ): Ֆրանսիան Մասկաթի սուլթանից կարողացել էր մի քարածուխալին կալարանի տեղ ստանալ: Անգլիան, այդ լուրն իմանալուն պէս, պահանջեց սուլթանից որ իրեն չալտնիլ Ֆրանսիայի հետ կալադրած համաձա-նութեան կէտերը և ստառնաց անմիջապէս ումբակոծել Մասկաթը:

Սուլթանը հարկադրեց Ֆրանսիայի հետ կապերած պայմանաթուղթը ջնջել և ալդ մասին հրապարակով չարարարել: Ֆրանսիան մեկնեց ալդ պայմանաթղթի ջնջումը նրանով, որ ալդ համաձայնութիւնը հակառակ է Օմանի սուլթանի և Անգլիայի միջև դորանից առաջ կապերած համաձայնութեան:

ՖԻԼԻՊՊԵԱՆ ԿՂԶԻՆԵՐՈՒՄ սկսեց բացարձակ պատերազմ պայտամբութեան գլուխ Ագլինալդօի և Ամերիկայի միջև, որովհետև Ագլինալդօն պահանջում է կղզիների անկախութիւնը: Ամերիկացիք դեռ ևս միայն կղզիները եղբներում են և երկրի խորքը չեն թափանցել: Յալժմ եղած կռիւների մէջ Ամերիկացիք անպայման չաղթող մնացին և Ագլինալդօն մեծ կորուստներ ունեցաւ: Ամերիկայի Միացեալ Նահանգների սենատը սակալն լճուց չնաճել կղզիները, որոնց մասին խնդիրը դեռ ևս առկալն է մնում:

† ՖԵԼԻՔՍ ՖՈՐ, Ֆրանսիական Հանրապետութեան Նախագահը, կաթաժահար վախճանեց փետրուարի 4-ին (ն. տ. 16-ին), երեկոթեան ժամ 10-ին:

† ԱՆՆԵՆԿՈՎ, Միխայիլ Նիկոլաեւիչ, իրականացնողը Անգրկասպեան երկաթուղու, վախճ. Պետերբուրգում չունւ. 10-ին: Հանգուցեալը պատերազմական խորհրդի անգամ էր:

† ԻՇԽ. ՍԻԵԱՏՈՊՈՂԿ-ՄԻՐՍԿԻ, Գմիրորիչ Իւանովիչ, գեներալ-ադիւտանտ, Նախկին օգնական Կովկասեան զօրքի հրամանատարը 1868 թալանից և Նախկին օգնական Կովկասեան փոխարքայի 1875 թալանից մինչև 1881-ի սկիզբը, որից չետու մի տարի ու մի քանի ամիս եղաւ Խարկովի զինւորական շրջանի զօրքերի հրամանատար և Խարկովի ժամանակաւոր ընդհանուր նահանգապետ: Մինչև ալդ բարձր պաշտօնների հասնելը, հանգուցեալը մասնակցել էր Կովկասեան պատերազմներում 1844—48 թթ., ապա Ղրիմի պատերազմում, չետու նորից Կովկասում 57-ից մինչև Շամիլի գերումը 25 օգ. 1859 թ. և ապա Չեչենների երկրում և Աբխազիալում: Ստացել էր երկու անգամ վերք գնդակներից: Ծնւած էր 1825 թ., վախճանեց ներկալ չունւ. 18-ին Նիցցալում: 1861-ից Կալարը նորան, հօրը ու նոցա ժառանգներին շնորհեց իշխանի տիտղոսը, որից ալդ տոհմը զրկւել էր 1831-ին լեհական պատերազմի մէջ իշխանական վաւերաթղթերը կորցրած լինելուն համար:

✓ † ՂԱԶԱՐԵԱՆ ԵՐԵԱՆԳ, վախճ. չունւարին: Հանգուցեալը ուսուցիչ էր և մամուլի գործիչ: Իւր կարեորագոյն չօղաճները տպագրւած են Մուրճում:

† ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆ Իսահակ, գնդապետ, վախճանեց թիֆլիսում, փետրու. սկզբներին: Հանգուցեալը, որը վերջին տարիներս ծառայութեամբ,

Միբերիայումն էր աւելի առաջ, Ախալցխա եղած միջոցին 10 տարի եղած նախագահ Կովկասի Հայոց Բարեգ. ընկերութեան Ախալցխայի ճիւղի, որ նա զործեց այնքան եռանդով, որ ճիւղի առաջարկով՝ ընկերութեան կենտրոնի ընդհանուր ժողովը նորան ընկերութեան պատուար անդամ նշանակեց.

ՆՈՐ ԱՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

(Ուր թիական չլայ — ներկայ տարւանն է)

- 1) ԾԱՏՈՒՐԵԱՆ, Ալէքսանդր. — Բանաստիղծութիւններ (1892—98), հատոր II. — Հրատարակութեան Աւետիս Պողոսեանի, Մոսկա, տպար. Ք. Բարխուդարեանի. 1898 թ. 1 սուրբի.
- 2) ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԳԼՍ, ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ. Գ. ԳԻՐՔ. 1898 — № 2. — Թիֆլ. տպար. Կ. Մարտիրոսեանց և Մ. Ռոտինեանց, 2 ս. (բաժնեզինը 2 գրքի համար 3 ս.).
- 3) ԼԱԼԱՅԵԱՆ, Ե. — Զաւարթ. Ա. հատոր. (արտատպ. Ազգագր. հանդէսից): Թիֆլ. տպ. Ռոտինեանցի. — 1897. 1 սուրբի.
- 4) ԼԱԼԱՅԵԱՆ, Ե. — Վարանդայ. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար: (Արտատպ. Ազգագր. հանդէսից): Թիֆլ., տպ. Ռոտինեանցի, 1898. 1 ս. 20 կոպէկ.
- 5) ԼԱԼԱՅԵԱՆ, Ե. — Զանգեզուրի գաւառ. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար. Ա. հատոր — Սիսիան (Արտատպ. Ազգագր. հանդէսից): Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1898. 80 կոպէկ.
- 6) ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, Ն. — Զհասութիւն. վէպ գիւղական կեանքից, երկու մասից: — Թիֆլ., տպ. Կ. Մարտիրոսեանցի, 50 կոպէկ.
- 7) «ԱՐԱՔԱ» գրական և գեղարւեստական պարկերազարդ հանդէս. 1898. գիրք Ա. (8-երորդ տարի): Ս. Պետերբուրգ. տպար. Գ. Շկլեաւէր. 2 ս. 50 կ. (բաժնեզինը երկու գրքի համար 3 ս.).
- 8) ԱՏՐՊԵՏ. — Ժառանգներ. (Քղի գաւառի թրքահայերի կեանքից): Նոր-Նախիջևան, տպ. Եղբ. Աւագեան. 30 կոպէկ.
- 9) ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, Յարութիւն. — Հանաք ու դանակ. Ա. ա) Կենազի շաչկէն. բ) Ստրանայ բունդին: — Թիֆլ., տպար. Վր. Հր. Ընկերութեան: 30 կոպէկ.
- 10) ԲՈՒԻՈՒՂԵԱՆ, Ա. բժ. — Ինչ է ժուկայութիւնը: Ս. Պետերբուրգ, 5 կոպէկ.
- 11) ՏԱՐԱԶԻ ՕՐԱՅՈՅՅ 1899 թ. (լաւելածներով). գինը ?
- 12) ԱՀԱՐՈՆԵԱՆՅ, Ա. — Բաշօն. (պատկեր): (Արտատպած Մշակ Լրագրից): Թիֆլ., տպ. Շարաձէ. 5 կոպէկ.
- 13) ԿՈՍՏԱՆԵԱՆՅ, Կ. — Մկրտիչ Նաղաշ և իւր ցաղերը. Յաւելած՝ Միջ-Նաղարեան ցաղեր զարկութեան վրայ: 1898, տպ. Էջմիածնի. գինը ?